Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Յոկտեմբերի 10-ին. Թիֆլիս. № 41.

ԵՐԱԶՆ Ի ԲԱՐԻՆ ԿԱՏԱՐԻ



Худож.-Лит. Е. Быховой, Тифлисъ

Կոստանդին Խատիսեանը երազ է տեսնում, որ Երեւանում հայ ազգը նուիրատուութեամբ արձան է կանգնում Խաչատուր Աբովեանին

(Ընդամէնն հաւաքուած է մի քանի հարիւր մանէթ)

Վիմագրատուն Բիխովի



Կար ժամանակ, որ ձիաքարշն էր մարդկանց տանում բե-
րում, հիմայ՝ ընդհակառակն է։

ՐԱՖԱՅԷԼԵԱՆ



Թիֆլիզի արհեստաւորների աւագը

(շարժ)

Վուր իս ասիմ՝ իմացի
Էս Գօլօվա Թացի.
Ինձ հուրիան բիրեան արին
Ասում ին թէ՝ դիմացի.

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1909 թ.

Տարի 4 ԽԱԹԱԲԱԼԱ 4 Տարի

Ծաղրածաղկական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան բոլոր հայ և օտարազգի գործիչների, որոնք արժանի են ծաղրանկարուելու, քննադատուելու, ծաղրի և ծիծաղի։

«Խաթաբալայի» բաժանորդները, այլև երդուեալ ընթերցողները ԱԶԱՏՈՒԱԾ ԵՆ

ամեն տեսակ պատուհասներից և խայտառակութիւններից

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մօսկովսկայեա փ. № 19

Յայտարարութիւններ ամեն լեզուներով և խիստ մատչելի գներով։ Մահացուցակները մուքթա։ Մեր ընթերցողներին ձան ենք տուում սեփական աէրօպլաններով։ Բազմաչխատ գործակալներին և «Խաթաբալայի» պրօպագանդիստ տարածողներին «Խաթաբալան» ուղարկւում ենք ձրի։

Խմբագրին կարող է տեսնել ով որ աչք ունի և քոռ չէ՝ ամեն բնած ժամանակ, խմբագրատանը անժամանակ և փողոցներում բոլոր ժամանակ։ Առանձին ընդունելութիւններ չի ունենում. իսկ գողանի խօսք ունեցողներից խուսափում է։ Նիւթեր, յօդուածներ, ոտանաւորներ, յայտարարութիւններ և այլն մենք էլ ենք ընդունում փոստով էլ, միայն ճանապարհածախսը ձերն է. առանց մարկայի նամակներ „սկզբունքով" չենք ընդունում։ Յօդուածների համար վճարում ենք, եթէ արժան ենք համարում. իսկ անարժանների համար փող էլ որ տան, չենք տպել։



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

| | | |
|---|---|---|
| Տարեկան Թիֆլիզում | 4 ր. | դուրսը 5 ր. |
| Կէս տարուանը . . . . | 2 ր. | . . . 3 ր. |
| Երեք ամսուանը . . . | 1 ր. 50 կ. | |
| Ամիսը . . . . . . . . . . . | 50 կ, | |

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала".

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala".

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ՆՐԻՑՆԱՆ

**Հոկտեմբերի 1-ից մինչև տարւայ վերջը «Խաթաբալան» արժէ 1 րուբլի 50 կոպէկ։**

## Ա Զ Դ

Մեր գաւառական բաժանորդներից շատերը ուղարկել են մեզ 4-ական րուբլի բաժանորդագին, փոխանակ 5 րուբլու։

Ներկայիս կրկին խնդրում ենք նրանցից, որոնք մնացած 1-ական րուբլին դեռես չեն հասցրել՝ ուղարկեն այժմ դրամով կամ պօստային մարկաներով—որպէսզի առաջիկայ նոյեմբերից թերթի առաքումը չը դադարեցնենք։

## ԷՋՄԻԱԾԻՆ

III

Ասում օգոստոսի թէնով էջմիածինը մէ, էնենց լաւ տեղ է կաղնած, վուր միլիօն աժէ։

Ժամը խօ ժամ է, ժամի կուզբերքին էլ շինած է էպիսկոպոսներու, վարթապետներու ու ժոնթերու համա լաւ լաւ օթախներ, սօրօէքի հանգի. էստի են ապրում էն միաբանները, վուր գիշեր ցերեկ հասուց ազգի համա աղօթելով, գիշեր ցերեկ հասուց ազգի ժեռնեներուն արքաութին զրգելով, իրենց օրերը անց են կացնում սիվ ու ցուրտ. ցուրտ՝ վունց վուր Ալագեզի Ջրերը, սիվ՝ վունց վուր ինջինէր Կիրակոսովի էլէքտրիչեսկիի լուսը…

Էս խուցերումն են մեր հոգեւորները սովրում ինտրինգ մինտրիգնէրը ու թէկի զուրթ է, վուր, վուրդի էրկու հայ ըլի, էնդի իրեք պարտիա կուլի. բաս դրա համա էլ, էջմիածնի միաբանների մէջ կան անմիաբան ու հարիր թասուր պարտիա։

Պարտիա կայ, վուր էջմիածնին ու հասուց ազգին, էնենց են մտիկ տալի, վունց վուր իրենց դէդի բաժինքի մէջ բերած մուլքը. էս պարտիէն նրանով լաւն է էն մէկէլ պարտիէքեմէն, վուր սրանք խիստ դուզին, թէ հասուց ազգի շէնութինը ու թէ՝ էջմիածնի պէյծառութինը։

Ազգի շէնութինը էնդուր՝ վուր իրենք էլ շէն կուլին ու էջմիածնի պէյծառութինը՝ վուր իրենք էլ պէյծառ պէյծառ լուս տան ու զուրձ կի չը շինին։

Մէ խօսքով, սա մէ էնենց պարտիա է, վունց վուր օրտեմբերիաների պարտիէն Պետերբուրխում.—համ, կասէ, մինք լաւ ըլինք ու կուշտ, համ էլ էնենց ըլի, կասէ, վուր մէ մազ չպակսի, կասէ։

Մէ ուրիշ պարտիա էլ կայ, սա էն թասուր պարտիա է, վուր խակի չէ ուզում էջմիածնում մնայ. էս պարտիէն մէ գլուխ էն է փիքր անում, վուր ան կաթողիկոսներուն, ան հայ ախմախ հարուստներուն խափէ, խիլք շանց տայ՝ վուր իրենք Մոսկով-Պետերբուրխում ուփրօ մինձ զուրձ կու անին… տեխնիկերանց հիդ սիլի-բիլի անելով, հարուստ վուրփեորերանց արքաութէնի ճամփայ շանց տալով. քանց թէ էջմիածնում մնալով, վուր առանց սրանց էլ կանայ եօլա գնայ։ Էտ պարտիի չլէնները խիստ ակտօէրներ են, խիստ ցօցիալութէնի խասիաթ ունին, չունքի ասում են, մինք հասուց ազգի պէյծառութէնի ու նրա ժեռեներու հոքու համա, կասէ, մեր կինքն ենք դրի, բաս օրէնք է, կասէ, վուր վուրփեների կնանիքն էլ, մեզ համա փիքր անին, կասէ։

Ու տեհնում ես խանդիկեան, վուր Կաթողիկոսին խափող վանականը, ան հայ հարուստից փուղ դուս գջլող վերդարաւուրը Թիֆլիզ, Պետերբուրխ, ան Մոսկով մնալով օր ու գիշեր ու գիշերն ուփրօ, հասուց ազգի համա փիքր է անում ու հենց վուր գթնում է մէ ախմախ ու փուղաւոր, (փուղաւորը խակի ախմախ ըլում է) վուրփեների, էն չախնեեթ ձեռքը սրտի վրէն դրած, վեղարը դէն շպրտելով, հոքուց է ասում էջմիածնին էլ, հասուց ազգին էլ։

Էս պարտիէն էնենց է, վունց վուր Պուրիշկևիչի պարտիէն Ղօսուդարստվենի Դումումը։

Սրանք էլ հնատի պլատֆորմա ու պօլուստանկա ունին, վունց վուր Պուրիշկեւիչը, Տիմոշկինը. մինչևի մինք կանք, կօսէ, լաւ է, իփ վուր չկանք կօսէ, փիսէ։

Մաշ։

Էս պարտիեւմը գիփ ջահիլ սիվագլխնիր են, վուր հոքիքն էլ սիվ սիվ ունին ծնած օրեմէն։

Մէ ուրիշ պարտիա էլ կայ, էս պարտիէն կուխնի պարտիի թաւուր է։

Թաք ուտինք, կօսէ, ու ջահանդամը թէ էքուց բան չի ըլի, կօսէ։

Սրա մէջ էն պառաւ միարաններից էլ կան, ջահիլ անհոքիներից էլ։

Պարտիա էլ կայ, վուր՝ հոքի ունիմ տալացուկ, հասուց սակի մեռելներու համա, ուփրո շատ ին փիքր անում, քանց թէ կենդանի մարթկանց համա։

Էշմիածնում էն թաւուր պարտիա էլ կայ, վուր իրա բարեգմերու համա գլուխը յիդ դրած ունէ. վունց վուր լաւ չօրանը օխչրի վրէն։

Պարտիա էլ կայ, վուր ճամփու վրէն մէ գլուխ աչք ունէ, թէ ով էկաւ ու ով գնաց, ինչ խօսից ու ինչ ասից։

Էն թաւուր պարտիա էլ կայ, վուր խօսելացաւ ունէ, ու էնենց բանիր կօնի, վուր կանայ նուրափսակ մարթ ու կնգան իրարմէն բաժնէ։

Մէ պարտիա էլ կայ, վուր չափարն ինչ է, չափարը՛, չափարներուն էլ վուտն ու ձեռը կու պաչէ. չիմ ասում թէ պրիստաւ-նաչալնիկին. ու հասուց սակի մեռելներուն թէ խաթրը պահէ, կենդանիքին կի հոքին կու հանէ։

Էս պարտիի մէջն էլ ջահիլնիր ուփրո շատ կան։

Հոքի ունիմ տալացուկ, ինչ կօնիմ իս միլիօննիր, քանի վուր միլիօննիր ունենամ, իս ուփրո փիս կուլի իմ բանը, համ ցօցիալնիրը, համ վարթապետնիրը դնջութին չին տայ, առաւտանից մինչևի իրիգուն կուխնեքումս կու ծեան. էտի էլ ինչ լագաթ. տո գուրթ վուր հարստութինը լաւ բան չէ իս ու իմ գջլատած հոքին։

Ա՛յ, խօսկի գէլիշ, իփ վուր դուք հարուստ չիք, ու իս էլ ձիր թաւուր՝ ջրումս մկնիրը ջիրիթ ին անում, էն չախն ուփրո լաւ ինք ըլում, դրուստ ու բարեբար ինք խօսում, վունց խաթրը, վունց մաթրը, ջան ինք ասում, ջան լսում, չոռ ին ասում, չոռ ինք ջուղաբ տալի. էս մաշ լագաթ չէ՞. Վա՜հէր օխնած, Աստծու իրա օղորմութինը արա էատի է է։

Բաս չէ ու հարստութինն է լաւը։

Վունց կանում իս հալալ հաց ուտի, չունքի ամէնքն էլ բերնիս ին մոտիկ տալի, վունց կանում իս քնի, չունքի գիդիս թէ կու սպանին, վունց կանում իս դուսը ման գայ՝ էքսպրօպրիատնիրեմէն քաշւում իս, վուր կու փախցնին, վունց կանում իս տանը նստի, չունքի վանականնիրը—վարթապետները հոքիդ հանում ին ու հոքուդ համա տունդ գալով, համ կնգադ ին փախցընում, համ փուղիրդ։

Հա, ինչ էի ասում. էն գուզէի ասի, վուր Էշմիածնի միաբանութէնի էն պառաւ, էն սիպտակամիրուս ու կռացած մէջքիրով վարթապետ-էպիսկոպոսներու մէջ, ուփրո մարթավարութին, ակասիրութին, օրինաւորութին, Էշմիածնի փառք ու պատւի համա փիքր ու նամուս կայ, քանց թէ էն ջահիլներու մէջ, վուր փարաջէն հաքնում ին էնդուր, չունքի կինքի մէջ տիղ ու շնուրք չունին, վեղարը դնում ին էնդուր, չունքի գլուխը ուղուփ չունին, որ անուղուփ ծեալով, աննամուս էլ ին ծեում, էն մէ կարգ ջեհելներու հանգի, վուր ջէր Վանքի ու սակի տունը քանդեցին ու իժում էլ խիղճ վուրփեերներուն խիլքից հանեցին. (անգաճը կանչի ճւմ, ճւմ)։

Էս պարտիէքի լաւը նրանութն է, վուր կառավարութէնի ու սակի դունից, ամէնքն էլ լեգալիզացիա է, թէ ինչ վուր գահրումար, նրա տակն ին։

Ոչով պրաւա չունէ, դրանց բռնէ, բիրթը տանէ, դրանց դէմ գրէ. էատի հանաք մասխարութին չէ, էատի գիփ գուրթ ու օրէնքով է. ու լաւն էլ էն է, վուր Էշմիածնում պարտիէքի բլօկ մլօկ չկայ. ով ինչ գուզէ կանէ, ինչ քէփը գուզէ կու շինէ, ինչղդամ գուզէ կուտէ, ինչղդամ գուզէ կու գլփէ, ումը գուզէ կը խփէ, ումը գուզէ կը գրնէ, մէ օր փիլիսոփ կու դառնայ, մէկէլ օրը միլիտոփ, մէ օր օխչար, մէկէլ օրը գէլ։

Ու Աստուծ կինք տայ հասուց սակին, նա էլ անդուրծ չի թողնում իրա սակի լաւերուն, Էշմիածնի անմիաբան միաբանութէնին։

—

Էշմիածնումը, լուսահոքի Գէվուրգ կաթղիկուսը մէ լաւ շկօլ է ժողոնի, անուծն էլ դրիլ է ճեմարան։ Էս ճեմարանում հաւաքւիլ է ու հաւաքւում է աշխրքի ամէն կուղմերից, բուլուր ծակ ու ծուկերից հայ տղէրքը, վուր ուսում ու գիդութին սովրին ու մէ մէ ջահիր դառնան սակի ու էգեղեցու, մարթկութէնի ու աշխրքի համա։

Էս ճեմարանը խիստ լաւ բան է։ Համա բանը նրանութն էլ է, վուր մինչևի հիմի ճեմարանը վունց թէ մէ ջահ, մէ փիալի վրա դրած ճրաք էլ չէ ուփի, թէ չասինք, էն մէ էրկու դուժին ռէքտէր-վարթապետներու վուր ապիշկի հանգը ձեռաց վառւում, ձեռաց էլ հանգչում ին ու մոխիր էլ չին կանում դառնայ։

Էս ճեմարանի լաւերից մէկն էլ էն է, վուր ինտրիգնիր լաւ ին սովրեցնում ու կինքի մէջ, թէ ճեմարանում, ծւմը դուզիք վիկալէք, ծւմը դուզիք տեհէք՝ ինտրիգնութինը ունին, ու տարի էլ չէ անցնում, վուր էատի կռիւ ու գալմագալ չըլի, տուր ու դմբոցով չանցնի։

Մէ Աւետիս Պօղոսով անումով մարթ կայ, օրինաւուր վաճառական է, ինչ անինք թէ խաչագուղներու քաղկիցն է. սա, իփ վուր տեհիլ է ու իմացիլ, թէ Էշմիածնում ինտրինգ-մինտրինգ խիստ ին սիրում, բլօմս փուղ է խարջի, մէր ապիգ Գամառ—Քաթիբի պամետնիկ է շինիլ տւի ճեմարանի գալաւնում, թէ ինչ է վարթապետները, թէ ճեմարանի վարժապետները ու թէ աշկերտները ակասիրութին ու միաբանութին սովրին, հենց վուր պամետնիկի վրէն մտիկ տան, ու ամանչին ու յիշին թէ իրենք ինչ ին ու ինչ պիտին ըլի. համա ձիր արիւր գիդենայ, սա էլ չէ օտկում. իսկի ամութ ունին, վուր ամանչին. ու էապէս, խիղճ Գամառ—Քաթիբէն ուփրո ամանչելիս է էլի, վուր ծառերի տերեւներ մէջն իր գլուխը պահիլ էր։

Հիմի ծառերի ճղները էլի կտրել տւին, վուր գլուխը էլի երեւայ, չըթաքցընէ, վուր մէ գլուխ տեհնին ու մտքընիրը գցին հին հին օրիրը, մինձ մինձ գուրծիրը։

(Էլի կուլի)

Թոապար Կոլտածուգեանց

# ՄԵՐ ԿԱՐԻԿԱՏՈՒՐԱՆԵՐԸ

Կոստանդին Խատիսեան.

Երբ ճաշից յետոյ զանւտրակում
Հանգիստ եմ առնում, մի քիչ մրափում,
Իսկոյն կիսախուփ իմ աչքի առաջ,
Միտքս մարմնացած «արձանն» եմ տեսնում։
Ամպերի միջից կոյսը նազելի
Մի ձեռքին պսակ թարմ դափնիների,
Միւսում փետուր (գրիչ էր առաջ),
Դէպի վար գալով նա գլուխ է տալիս...
Հրճւում է հոգիս, կուրծքս բարձրանում,
Ուռուցիկ փորիս հետ հաւասարւում.
Եւ քիչ է մնում անհանգիստ լինեմ
Աչքս բաց անեմ ու կոյսին տեսնեմ.
—Բոռ Եա, չեմ տեսնում, այստեղ մենակ եմ.
Պսակ ես բերել իմ ճակատիս կապեմ։
Փետուրը կոխիր աչքը ամենքին.
Որ չեն աջակցում իմ սիրուն մաքին։
Որ կոյր, անտարբեր, ապերախտ, քնած
Միայն եսական կեանքով արբեցած՝
Ոսկին ծախում են անտառականներին
Իսկ կապկէնները այս տեսակ գործին։
Անամօթաբար նոյնն են միշտ կրկնում
Թէ տաղանդներին սիրում են յարգում։

—

Երևանի ձիաքարշը.

Հայաստանի օդն հեղուկ է,
Բաղցր ջուրը պինդ երկաթ է,
Արևը գով սառուցի պէս,
Սառուցը տաք կրակի պէս,
Ուղտն ու գոմէշն օդի միջով
Սլանում են նետի կերպով.
Բեպլան, պալպալ, աէրոպլան
Հարց է արդեօք մեզ պէտք կգան.
Թարս է մեզ մօտ ամեն բանը.
Ծուռ, անարդար դատաստանը,
Ձիաքարշը ձեզ օրինակ.
Ոչ թէ վագոնը միայնակ,
Այլ շատ անգամ ձիաններն էլ
Ստիպւած ենք հետը քաշել։

—

Տնտեսական մրցում

Է՛յ, զոնչի, միսօ, ամխանակէրօ
Ի՞նչ էք շտապում սպասեցէք մօ.
Դեռ ժամը տասն է, նոր է լուսացել
Դեռ մի ժամ չկայ, որ վեր եմ կացել։
Վաճառականը կարգին կլինի
Ի՞նչ բանւորի պէս վազում էք գործի.
Երկինքն ամպամած, փողոցը ցեխոտ
Դուք չէք խնայում ձեր ջանն ու ձեր ոտ
Չէ, եղբայր, ձեզ պէս ես չեմ շտապել.
Ջանում թէ քիչ էլ յետոյ կ հասնեմ.
Սիգարը բերնիս, արօտը ձեռիս,
Կօշիկս մաքուր, ռեզինգօտն հագիս
Վայե՞լ է որ ես գործի շտապեմ.
Թէ ինչ է, չլինի, ձեզնից յետ ընկնեմ։



## ԺԱՄԱՆԱԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

(Նւէր մեր գործիչներին.)

Գիւղական հրապարակում ճառ է արտասանում ժամանակակից, ժողովրդական շահի պաշտպան հասարակական գործիչը։

—Եղբայրներ, հարուստ ու աղքատ, գող ու ազնիւ մարդիք և դուք խուլ ու համրեր կաղեր ու կաթւածահար եղածներ, գաւաճաններ և եղջիւրներով զարդարւած ամուսիններ, լսեցէք ինձ, ես կանդիդատ եմ, հրաշալի կանդիդատ պալատի համար. ես եմ, որ պէտք է առատացնեմ ձեր հունձը խղճուկ խրճիթներդ անման պալատների փոխեմ, դատարկ գրպաններդ փողով լցնեմ, շտեմարաններդ հացով... Այստեղ համեցէք, ինձ մօտ, բարի-մարդիկ, ձայն տւէք ինձ, անպատւած կանանց, թոքախտաւոր և ուժասպառ գինւորների միակ պաշտպանիս։

«Ես կասեմ կարկուտին՝—մի տեղար, պատերազմին, մի պայթիր։ Ես գարշահոտ լճերի ջուրը հրաշալի գինի կը դարձնեմ, իսկ փշերը, երբ դիպչեմ նրանց, վարդի թփերի կը փոխւեն։

Կանդիդատի չորս կողմը հաւաքւել է հոծ բազմութիւն։

—Իմ որդիս պատերազմ է գնացել, այստեղից շատ հեռու և այնտեղ մեռել է,—լացախառն ձայնով գանգատւում է մի կին։

—Ես կը վերադարձնեմ նրան կենդանացած.—պատասխանում է գործիչը

—Իսկ իմ մի ոտքը կորւած է.—ասաց կաղը։

Նայեցէք իմ վէրքերս, նա տանջում է ինձ.—գանգատւում էր երրորդը

—Ես ձեր վէրքերի վրայ պարլամենտական կնիք կըդնեմ և նրանք կառողջանան։

—Ես իննսուն տարեկան եմ,—ասաց մի ծերուկ։

—Ես կըպակասեցնեմ 60 տարի և դու կը երիտասարդանաս։

—Ես արդեն երեք օր է հաց չեմ կերել,—գանգատւում էր աղքատը։

—Ես կը կերակրեմ քեզ քաղցր պաքսիմաթներով։ Ամբոխի միջից դուրս եկաւ մի մարդասպան և մօտեցաւ նրան։

—Ես մարդ եմ սպանել և դրա համար էլ տաժանակիր աշխատանքի եմ դատապարտւած,—ասաց նա։

—Ես վերջ կըտամ բանտերին ու աքսորին, կը պատժեմ արդարադատութիւնը և քեզ ժանդարմ կը դարձնեմ։

—Իմ պարոնս հարուստ է և ուժեղ,—ասաց մի գիւղացի. Նրա ոչխարները կոխկրտում են իմ արտերս, իսկ շները խեղդում հաւերիս։

—Ես կը խլեմ նրա կալւածքները և կը տամ քեզ։

—Գիւղացիները հրաժարւում են առանց վարձատրութեան մաքրել լճերս,—բացականչեց կալւածատէրը։

—Ես կը կախեմ նրանց քո այգու ծառերից։

—Ա՜խ, պարոն.—հառաչանքով բացականչեց մի երիտասարդ աղջիկ,—այդ անիծեալ քաղաքները խլում են մեզանից, մեր փեսացուներին, նրանք գնում են այնտեղ և այլևս չեն վերադառնում։

—Ես թոյլ չեմ տալ ոչ մի երիտասարդի քաղաք գնալու։

—Կեցցէ՛ հանրապետութիւնը.—լսւեց ամբոխի միջից մի ձայն։

Կանդիդատը պատասխանեց։

—Կեցցէ՛ հանրապետութիւնը։

—Կեցցէ՛ թագաւորը.—լսւեց մի ուրիշ ձայն։

Կանդիդատը կրկնեց

—Կեցցէ՛ թագաւորը։

—Կեցցէ՛ կայսրը.—գոչեց երրորդը։

Նա դարձեալ կրկնեց։

—Կեցցէ՛ կայսրը։

Այդ րոպէին ամբոխի միջից դուրս եկաւ մի գեղեցիկ տխրադէմ կին։

—Դու չե՞ս ճանաչում ինձ.—հարցրեց նա։

Կանդիդատը պատասխանեց։

—Ոչ, սակայն քո դէմքդ կարծես ծանօթ է երևում։ Արդեօք որտեղ կարող եմ տեսած լինել քեզ, անիծեալ կին։

—Ես կեանքն եմ... ինչ պէտք է անես դու ինձ համար։

—Այն, ինչ որ անում են ուրիշները։ Ես պէտք է օգտւեմ քեզանից, ես պէտք է ուտեմ ու քնեմ։ Քո անյատակ գրպանից վերցրած փողերով ես ձեռք կը բերեմ գեղեցիկ կանայք, հրաշալի կալւածքներ և բացի այդ, փառք... իսկ եթէ դու անբաւական կըլինես իմ արածներից, ես կըջարդեմ գլուխդ, տեսնում ես, այս... այս փայտով...

Թարգմ. Վ.Թում

## ՄԵՐՈՆՑ ՏԻՊԵՐԻՑ

Երբ շահ ունի, նա գործիչ է
Մեծ եռանդով տոգորւած.
Տեղն էլ եկաւ նա մատնիչ է,
Փողի փայլից շլացած,
Տուր նրան փող, քանիմ կոպէկ,
Կուզես մի լաւ հայհոյիր.
Նա այդտեսակ բանից երբէք,
Չի սրդողի, լաւ գիտցիր։
Մինչ շրջում էր քաղցած փորով,
Սօցիալիստ էր լայն մաքով.
Բուրժուայի մօտ տեղ գտաւ,
Խիղճ, գաղափար մոռացաւ։
Երէկ նա թունդ դաշնակցական,
Այսօր կադետ է դառել,
Որովհետև մարդիկ նրան,
Ազգի փրկիչ չեն առել։
Մեր ազգի մէջ այս չորս տիպի
Մարդիք դուք շատ կտեսնէք,
Որոնք իրանց շահի համար,
Գոյն կփոխեն անհամար։

Փիտոն Ճլթեանց



—Լսեցի՞ր, պ. Կարապետ, էլի խայտառակ եղանք.

—Չէ, ինչ է պատահել, պ. Հայրապետ, էլի ինչ սև խաբար ունես տալու։

—Էջմիածնում, օծման օրերին, Բարթուղիմէոս եպիսկոպոսը անպատւել է «Թայմսի» թղթակցին։

—Վա՜ ինչի, թղթակցի հետ ինչ գործ ունէր. Բարթուղիմէոս եպիսկոպոսը չգիտէ՞ ինչ է հիւրասիրութիւնը։

—Չեմ կարող հասկացնել, ինկատէս հիւր թղթակցին չէ անպատւել, նրա կենացը խմել է, բայց այդ թղթակցի երեսին ասել է, որ մամուլը, որի մէջ և անգլիականը, այժմս այլևս եօթերորդ պետութիւն չի կարելի համարել, որովհետև «ընկած է և անբարոյականացած»։

—Բա սուտ է ասե՞լ։

—Չէ, սուտ չէ ասել։ Անգլիացի թղթակիցն ինքն էլ է համաձայնել եպիսկոպոսի հետ։ Բայց ախր խայտառակութիւն է... անգլիացու երեսին ասել, թէ «եսեսուն տարի է մամուլի յորդորներին հաւատացինք և կոտորւեցինք։»

—Սուտ է ասե՞լ, պ. Հայրապետ.

—Չէ, սուտ չէ ասել. «Թայմսի» թղթակիցն այդ բանի մէջ էլ համաձայնել է եպիսկոպոսի հետ, բայց...

—Էլ ինչ բայց, ո՞րն է այդտեղ խայտառակութիւնը։

—Խայտառակութիւնն այն է, որ ամեն ճշմարտութիւն չի կարելի հրապարակով ասել, ամօթ է, չէ՞։

—Բոլորովին համաձայն եմ։

—Ես էլ այդ եմ ասում է՛։



## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ ՑԱՃԱԽՈՂՆԵՐ

—Ես այսօր 5 կոպ. տոմսակի եմ ուել բայց 50 կոպ. բուֆետից բան եմ կերել, ոչ մի կոպէկ չը վճարելով։

—Է՜հ. բա ես. աղջիկ պարոնի գլուխը խոտն էր միւշտարիներով, երկու պօնչիկ թացրեցի, չաևսա. էրկուսն էլ կերայ իրա աչքի առաջ, առանց փող տալու ծլկւայ։

—Իմ արածը աւելի ազնիւ տեսակիցն է...

—Այսինքն։

—Ես քաղաքավարի կերպով կանգնեցի բուֆետի առաջ, գատարկ փողպանս էլ ձեռքիս բռնած, կերայ, մի խօսքով, ամեն բան, երբ որ ստամոքսիս պահանջը լրացաւ, բերանս սրբեցի թաշկինակով ու հեռացայ առանց վճարելու...

—Ա՜խ. երանի թէ այս տարւայ թատրոնի սէզօնը Զուբալովի տանը անցկենայ։

—Է՜հ, քէֆդ քօք պահի, Արտիստական թատրոնը մնաց, ինկի յուխեսն էլ չի բացւիլ... կառավարիչներն էլ կոտր են ընկել։

—Ինչ ես ասում այդ ձրատեղից գիտես.

—Չէս տեսնում որ պ. Բ...եանը միշտ Զուբալովի թատրոնն է յաճախում...

—Է՜հ, երանի չյաճախի։ Ենցեալ օրը իմ գիմացի աթոռի վրայ նստած էր. ես համարես թէ բեմը չէի տեսնում, կարծես գիմացս մի վարագոյր էր քաշւած։

—

—Ո՞ւր ես, շտապում այդպէս Մինաս.

—Զուբալովի տունը։

—Ի՞նչ կայ.

—Տօ չգիտե՞ս ինչ կայ. թատրոն, Հէյ.

—Է՜հ. լաւ է փորներս կը կշտացնենք։

—Բաս ինչ կանենք. քէֆդ քօք պահի, էլի պարզ երես դուրս կը գանք։

—Մինաս, այս անգամ աչխատենք պօնչիկներ շատ թացնենք, անաէրը շատ քաղցր բան է։

Մակինակի

## ՖԵԼԻԷՏՕՆ

### «ԱՆՑԱԶՈՂ ՀՈԳՈՑ»

19... թւի ամառը սովորականից շատ էին Գանձակի Բ...գիւղի ամարանոցաւորները։

Գիւղն էին եկել նաև, օտար քաղաքներում գտնւող գիւղացի երիտասարդները։

Երիտասարդների մի մեծ խումբ նախօրօք խորհրդակցելուց յետոյ, որոշեց եկող կիրակի մի լաւ խնջոյք սարքել։ Քէֆի տեղը ընտրեցին գիւղի մէջ աչքի ընկնող մի լաւ պատշգամբով տուն։

Տան տիրոջ ընտանիքի մի քանի անդամները օտարութեան մէջ էին գտնւում։ Նրականերն ամենայն սիրով տունը իր պատշգամբով դրին քէֆ կազմողների տրամադրութեան ներքոյ—մանաւանդ որ քէֆ կազմողների մեծ մասը, ծանօթներ և բարեկամներ էին տանտիրոջ օտարութեան մէջ գտնւող անդամներին։

Վրայ հասաւ կիւրակի օրը։ Գիւղի պաշտօնակատար ջահել տղաները եռանդուն շարժման մէջ էին։ Նրանցից մէկը գինու պատրաստութեան յանձնիցն էր, միւսը փայտի հոգսն էր քաշում, երրորդը գնացել էր հանդից առաջին երինջը բերելու։

Մի ժամ չանցած ամեն բան պատրաստ էր։ Անմիջապէս սկսեց կեր ու խումը։ Հարկաւոր էր ընտրել մի սեղանապետ, որ կարողանայ լաւ քէֆ ցոյց տալ, այդ պաշտօնի համար ընտրեց յայտնի Գուղին։

Թամադան բոլորովին նման չէր այն տեսակ տափակախօս թամադաներին որոնք այսպիսի խնջոյքներում, սերտած առաջարկում են «աջակողմեան», «ձախակողմեան», «գիմացինի» կենացները, որ ընդունւած է շատ տեղերում։

Տարօրինակ թամադան աւելի տարօրինակ էլ սկսեց կառավարել սեղանը։

Բացի իրենից նա ընտրեց երգի, ծափահարելու, լռեցնելու, պարածելու, ճառեր խօսել տալու թամադաներ...

Գրէթէ սեղանակիցներից ամեն մէկը մի պաշտօն ստանձնեց։

Հենց որ թամադան բերանը բանում էր մի կենաց առաջարկելու, լռեցնող թամադան տեղից վեր կենալով բարձրաձայն «սուս—սուս» գոռալով, պահանջում էր լռել։ Ծափի թամադան հրամայում էր ծափահարել, երգի թամադան հրամայում էր երգել, պարի թամադան հրամայում էր սեղանապետին տեղից վեր կենալ և պարել, իսկ զուռնի թամադան հրամայում էր զուռնաչուն ածել «սատաւօտ լուսոյ» ի եղանակը...

Զեռնւած խառնուրդից առաջ եկաւ անզուսպ ծիծաղ, քրքիչ ու խառնաշփոթութիւն, և սեղանապետը մեծ դժւարութեամբ կարողացաւ խանգարւած կարգը վերականգնել, բացատրել տեղի ունեցած թիւրիմացութիւնը և առաջարկեց ամեն մէկին, իր դերը կատարել հերթը եկած ժամանակ, առանց մէկը միւսին խանգարելու...

Միայն մինչև վերջն անուղղելի մնաց լռեցնող թամադան. հէնց որ մէկը խօսում կամ երգում էր, կամ պարում, իր անհանգիստ «Սուս սուս» ով լռեցնում էր երգողին ճառախօսին, զուռնաչուն...

Այս ուրախութեան միջոցին երբեմըն երբեմըն տխրում էր տան տէրը. նրա ուշքն ու միտքը օտարութեան մէջ գտնւող որդիների մօտ էր...

Սեղանի ամենաուրախ ժամանակ, գիւղի «գիմաց տեղում» մի կառք կանգնեց։ Կառքից դուրս՛ եկաւ մի բաւական բարձրահասակ, չէկ միրուքաւոր, կամիլաւկայով և խաչակիր ատաղ քահանայ, նա պէտքէ կառքը թողնէր Բ...գիւղում և այս տեղից ձիով ճանապարհւէր հարևան գիւղը...

Քահանան իր քայլերն ուղղեց դէպի քէֆ անողները, ուր կարծում էր իրեն գրկաբաց են ընդունելու...

Բայց երբ նա մօտեցաւ քէֆ անողների սեղանին, մի քանիսը տեղերից կանգնեցին, միւսները նստած, գլուխները քաշ ձգած, սկսեցին փնթփնթալ։

Քահանայ հիւրը երեսը խաչակնքելով սկսեց «հոգոցն հանգուցել»... Քէֆը փչացաւ, սեղանակիցների շրջանում անցաւ մի սոս-

## ՍԻՐԵՐԳ

(Лохвицкая-ից)

Կուզեի ես՝ իմ հոգի ու մտորմունք,
Ցնոր—երազներն գաղտնիկ, տենչալի՝
Դարձնել փառփռուն կենդանի ծաղ-
կունք,—
Բայց... որ վարդե՞րը խոսս փառ փայլեին

Կուզեի՝ ննար իմ կրծքի միջին,
Որպես զի՝ յուրեց մատաղ եմ զգացմունք՝
Ինչպէս զիլ երգեր, այնտեղ հնչեին,—
Բայց... կտրեի՞ն սրտիս լարերունք:

Կուզեի՝ ննում գեթ մի ռայեի՝
Անուշ երանաւէտ վայելքն իմանայ,—
Բայց... եւ երանի՞, որ ես մեռնեի,
Որպես զի ննրեն էլի չարքնանայ:

Շոլինդ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՆԵՄԱԿ ՂԵՐՍԻՑ

Ժամ շինելու ղայտան գտանք:

Փոքր քեզի, Աստուած. հազմը բերան փառք, որ աս օրերին ալ դուշ էղանք: Փոքր քեզի Աստուած, օր ցիրկի աղջկնե-րուն ալ էյտան էղանք: Վա՜յ. վա՜յ. վա՜յ. ամօթ մեզի. հազար ամօթ... Թեթեւցաւ, յամէն բան զաշմըկութեն զատաւ. տէրտէրները, աղաները ցիրկի բիլէտ ծախին կը: Գիտիմ չիք աւտնայ. դէ յականջ էրէք թարիֆ էնիմ: Տասը հազար հոյ քրիստոնիայ, 50 հատ խալիս ղանկին աղաներ, 25 տարի է չապալամիշ զլլին կը, մէ ժամըմ չին կանայ զլուխ բերի: Տարին էրկու յիրեք սրա անճախ շարին կը ու շարաշ կենին կը: Փարայ չկայ, անաստւած ուստաներն ալ բաղինաւայ չեն շարի: Օղորմութիւն թափ էնելով ալ, թափ էնողներուն յերեսի կաշին գնաց: Ալ յուրիշ ելլան չգտան, վազեցին ցիրկի խաղէյինի քովը, աղաչեցին օր հայերու ժամը շինելու համար ցիրկ խաղցնէ, օր աս փողովը ժամ շինին: Շնորհակալ ինք, ցիրկի ուստաբաշին աս լաւութենը էրեց. ամսիս 22-ին ժամ շինելու ցիրկն էր: Զանգուլակը ճընկճընկացուցին թէ չէ, բոլուկմ չպլաղ աղջկներ մէյտան մտան ու բաշլայեցին բեռչակլամիշ յԵԱԽԻ: Ասոնք տաճկեցին, անդին տաճկեցին, վեր վեր թռան, չեշիտ չեշիտ մէյմունութեններ էրին, չեշիտ չեշիտ ֆորմեր հանեցին. գիւլաշ բռնեցին, յերար պառկեցուցին, ջահէլ ջուհուլներուն հոգու տունը մարեցին, թափայ ֆռռացուցին: Աղջկներուն ալ մուխը մարի, գօշերը բաց, փաչէքը բաց. թեւերը կիսէն հետ բաց—բիթուն բաց, չիփ-չպլաղ: Ես անպէս տեսայ, յուրիշները կըսէին կը, թէ չպլաղ չէն, շորերը քիփ ին հագիր, համ էլ հագածները ջանտակի ռանկին է:—Հարնայիսայ, ադրին աս քէօչակները, մեր հաւարին հասան, ժամ շինելու ղայտան գտանք:

Ղալայչի Մարգար

---

կալի խրարանցում:

Իսկ տան տխրօջ դէմքին կենդանութեան նշոյլ չէր մնացել նա անհամբեր սպասում էր «հոգոցի» վերջաւորութեան:

Երբ քահանան աւարտեց հոգոցը, տան տէրը արտասուախառն աչքերով մօտեցաւ տէր հօրը ու ասաց.—«տէր հայր, մեզ կենդանի սպանեցիր, տան, շատ արա, ինչ փորձանք է եկել երեխաներիս գլխին, մրն է մեռել...

—Հանգստացէք, որդիք, հանգստացէք, ոչինչ չէ պատահել և ոչ ոք չի մեռել. այս հոգոցն ես ասում եմ, անցեալ տարի ձեր գիւղում վախճանուած իմ կարգակից աւագ քահանայ տէր Պօղօսի հոգու համար...

Ներկայ եղողները, արդար զայրոյթով լցուած, միքանիսները էլ ուղղակի գիտակցութիւնը կորցրած՝ հայհոյանքներ տարափներ թափեցին, թէ ներկայ եղող աւագ քահանայի և թէ հանգուցեալ քահանայի հասցէին...

Ցոյց տալով որ հոգոց ասելու համար աւագ քահանան հանգուցեալի տունը պիտի երթար...

—

Այն օրւանից լաւ, չեմ յիշում, քանի տարի է անցել. բայց երբ ես դժբախտութիւն եմ ունենում ներկայ լինելու, թէ կուզ ամենաազիզ հանգուցեալի թաղման հանդիսին, միշտ «հոգոց» ի ժամանակ յիշում եմ աւագ քահանայի գիւղում արտասանած անյաջող «հոգոցը» և միշտ արտասունքի փոխարէն, ծիծաղս է գալիս...

Օզը-Դալղի

---

## ԵՐԵՒԱՆԻ ՋՈՒՐՆ ՈՒ ԼՈՅՍԸ

Մի քանի մարդիկ ցանկութեամբ լցուած,
Միայն քաղաքի շահին նուիրուած,
Թղթից պատրաստած աւազան դրին,
Վերջապէս «Նորքա ջուրը» բերեցին.
Ջուրը խմեցինք, սառն էր, հաւատա,
Աստուած պատճառին թող երկար կեանք տայ.
Թէ չէք հաւատում դուք իմ խօսքերին,
Նայեցէք ղարսած խողովակներին՝
Կէսը գետնի տակ, կէսը մէյդանում.
Անհաշիւ գործը այդպէս է լինում:

—

Պլան են կազմում մի հսկայական,
Կայարան շինել էլեքտրական:
Կեանքը մեզ համար շատ հեշտ կը լինի,
Զանգուն էլ կը տայ ուժը մեզ ձրի.
Փայտ ու ածուխի դարդից կը պրծնենք,
Էլեքտրական կրակ կը վառենք.
Մեծ կոյուղիներ և տրամվայ շիկ
Փողոցով կանցնեն արագ, գեղեցիկ.
Շախս են ցոյց տալիս այս գործի համար,
Ութ հարիւր հազար—մի չնչին գումար
Եւ այդ բոլորը լոկ թղթի վերայ,
Շինուեց վերջացաւ. Աստուած է վկայ:

—

Իսկ թէ դու փորձես տածը լսել
Եւ քո ունեցած կարծիքը յայտնել՝
Իսկոյն քեզ կասեն «միտք ես պղտորում,
Քաղաքի շահը դու լաւ չես պահում»:
Դուշման թող պատռի, քաղաք քէֆ արա,
Զուգողի աչքը թող տեղից դուրս գայ.
Տեսնենք այս գործը մինչ կը վերջանայ,
Աստուած պատճառին թող երկար կեանք տայ:

Մ. Ե.

---

## ԻՆԴԱՒՈՒՐ *)

(Առակ ՄԵԾԵՐԻՆ)

Մէ մինձ ինդաւուր մէ օր վիկացաւ,
Դաղէթ մօզոնից, բէղախտուր դարձաւ.
Ջեչմակներ դրից, մէ հատ փէտ բռնից
Գլխին էլ բանցրը ցիլինդրի դրից:

Արլար, հաւ ու բադ էս վուր իմացան,
Մէ-մէ թուխտ բռնած կանտորէն էկան.
«Պարուն ինդաւուր, մինք շատ ուրախ ինք.
Վուր քեզ պէս խելօք բէղախտուր ունինք»

Աքին, թխտերը սուօլի վրայ դրին,
Համ էլ խոստացան, վուր միշտ կու գրին.
«Դուն արխէյին կաց, պարուն բէղախտուր,
Ում զուզես կըթինք, դու մեզ պըտւա տուր»

Մեր ինդաւուրը չեչմակը դըրից,
Թխտերից մէկը ձեռաց բաց արից,
«Միծեռնակն ինչ է, վուր մեզ պէս թռչէ,
Ան թէ բլբուլը, աքլօրի պէս կանչէ:

Մինք ամէն բանում մէ չնուրքով բան ինք,
Համ էլ խիճ մարթուն խիստ պէտքական ինք.
Առանց կարմիր ձու, առանց ինդաւուր,
Ի՞նչ զադիկ կուգի, պարուն բէղախտուր»:

Պարուն բէղախտուրն էս հենց վուր կարթաց,
Քինթը վեր թողից ու քիչ կըլկլաց.
«Շիտտ լաւ է գրած, իս ու իմ հօքին,
Օրէսի դէնը խրատինք ամէնքին:

Թող անգաճ դնին, բոլոր թեւաւորք.
Մինձը թէ պատիկ, մէ խօսկով թռչունք.
Կարթան մեր գրածը, բան սովրին միզմէն,
Թէ վուր ուզումին մէ քիչ լաւ ապրենա:

—

Ու էսենց, սրանք շատ բան գրեցին,
Իրենց խելքումը խալխին խրատեցին.
Գանայ միզ մօտ էլ էսենցներ քիչ կա՞ն,
Իրենք մէ բան չին, խալխին խրատ կուտան:

Թախօօ

*) Հնդկահաւ:

## ԵՂԻԱ-ԱՊԵՐԸ ԵՒ ԹՈՒԽՄԸ

*(Նուէր հայ գաղթականներին)*

Եղիա-ապերը—շատ տարի առաջ—
Շուշում մի պարտէզ ունէր—կոփ կանաչ.
Ուր սիրաբորբոք սոխակն էր երգում,
Մշուշով պատած վարդենու գրկում.
Ուր ծառ ու ծաղիկ, բանջար ու արօտ՝
Սէր էին շնչում ամէն առաւօտ
Եւ անինչտա խանդով հեշտալից համբոյր
Տալիս հովասուն քամուն—խնկաբոյր...

Այնտեղ բալ, ծիրան—նոր թափւած հազած
Բուն էին մնում—մխմխանց դրկած.
Բնուն էին մնում և զարթնում կրկին՝
Լուռ աչքով անում ծաղող լուսնեկին...
Այնտեղ ալ վարդը—դեռ քնաթաթախ,
Գուտ-պուտ գոհարը ցողահար դէմքին՝
Թփերի ճեղքից—զւարթ և ուրախ
Ողջոյն էր տալիս հեղ մանուշակին...
Այնտեղ, հովանու ծառերի տակին,
Անլուռ կարկաջը փոքրիկ վտակին,
Ինչպէս մայրական մի կոչ կաթոգին,
Իր մօտ էր կանչում ծարաւ անցորդին...
Ամենն—անթերի, չքնաղ, կատարեալ...
Ամէն մի ծաղիկ—մի վառ իդէալ...,

Գիշեր և ցերեկ պարտէզի վերան
Անքուն հսկում էր մեր ծերուկ Եղիան.
Ոչ ծիտն իր թևով, ոչ մարդն իր ոտով
Անցնել կարող էր պարտէզի մօտով.
Սակայն, չգիտեմ, թէ ինչպէս եղաւ,
Որ նորա աչքին մի օր քուն եկաւ.
Տանձենու տակին նա անհոգ պառկեց
Եւ անուշ նիրհով աչքերը փակեց...,

Այս պատեհ դէպքից օգուտ քաղելով՝
Հարևանի թուխսն—իր ճուտիկներով՝
Ձափարի տակից—«Կը՜ռթ,.. կը՜ռթ...»ներս մտաւ.
Եւ քաղհան արաւ, ինչ աչքը տեսաւ...

Հէնց թխսի ձայնը ականջին հասաւ՝
Իսկոյն ծերուկը տեղից վեր կացաւ,
Կոշտ ձեռքը տարաւ՝ աչքերը մաքրեց
Եւ անկոչ հիւրին այսպէս մեծարեց.

«Բճ...քու թեփուրը... դէ, քշ՜շ բառեղան
Հինչ ըս, քեանդըրաղ Ղուժուխցու Ֆեան,
Վէննիս մինն—առաչ, մինը—ետ տինում,
Կչում, կրկչում. վիգդ ծռմռում,
Մի թորուն ճստ էլ—քմակատ արած՝
Էտ հըրըս քինում—աչքդ չորս արած...
Ախպէրըս ինձ նըհետ,—փանդ ըս օգում,
Թա—ափաչափըս,—բախճըս ըս չափում...»

Թուխսը, որ կեանքի փորձով էր լիքը,
Իսկոյն հասկացաւ գլխին գալիքը.
Մի սուր կատաչով առաւ ձագերին
Եւ մտաւ տիրոջ զուիթը կրկին.
Սակայն ցաւն այն էր, որ թխատէրն էլ
Իրանց բակիցն էր «քշ՜շ-քշ՜շն» ընկնել...
Հիմա մենք մնենք վիճակը թխսի.
Ինչ հող տայ գլխին,—ո՞ր մէկին լսի.
Կեանքի թանգ գնով պարտէզը դանդայ,
Թէ—ծեծ ուտելով հէնց տեղը մեռայ...

Այս երբ նկատեց Եղիա-ապերը՝
Շուռ եկաւ դէպի հաւերի տէրը,
«Բա՜, ես քու.. դէ՛, դէ՛, հինչ անեմ.
Տէ՞րը չի բոխճսս միլ լա՜ւ պէց անեմ...
Ա՛ շնկոտկի քած. տիւ—քու հայաթան,
Ես էլ հօւ բիզըմա—քշեմ իմ բաղան.
Բա էտ հաւերը հըր քինան՝ կորչեն,—
Տափի տա՞կ մննեն, թա՞—երգինք թռչեն...

Լիլիպուտի

## ԱԶԳԱՅԻ՞Ն ՕԳԱԳՆԱՑՈՒԹԻՒ՞Ն

### ԶԵԿՈՑՈՒՄ

(:

Ամսիս 4 ին, կուսակցութեանս բիւրօյում կայացաւ «Ազգային Օգագնացութեան ընկերութեան» առաջին ժողովը։

Ինչպէս միշտ, այս տեղ էլ առաջնակարգ դեր խաղում էին ազգային կապալառուները։

Որովհետև «Ընկերութեան» կանոնադրութիւնը ամբողջութեամբ դեռ չէ կազմւած, ուստի մի մասնաժողով ընտրւեց, յետագայ նիստին ներկայացնել մի ամբողջացած կանոնադրութիւն, որ քննելուց ու մշակելուց յետոյ, ներկայացւի պատշաճաւոր իշխանութեան ի հաստատութիւն։

Մասնաժողովին քարտուղար ընտրւեցի ես, որ թէպէտ կանոնադրութեան 244-րդ յօդւածի համաձայն, իրաւունք չունէի հրապարակելու Ընկերութեան գործնէութիւնը, բայց Դաշնակցական կուսակցութեան տւած երդումի համաձայն, որ ոչինչ չպիտի ծածկեմ կուսակցութիւնից, անտես եմ առնում յիշեալ 244-րդ յօդւածը։

Այսպիսի կամայականութեան դէմ, ես ունիմ իմ պատճառաբանութիւնները։

1. Սկզբունքով հակառակ եմ ամէն տեսակ ծածուկ պահւող գործերի. 2. Դաշնակցական կուսակցութեանը տւած երդումս, իբրև առաջուց կատարւած իրողութիւն, աւելի գերադաս եմ համարում և 3. քաջ գիտենալով, որ Ազգային Օգագնացութեան Ընկերութիւնն ինձանից լաւ քարտուղար չի կարող ճարել, մէկ խօսքով, որ ես դըրանց համար անփոխարինելի եմ, առանց վախենալու անցնում եմ գործի, հրատարակելով կանոնադրութեան հիմնական յօդւածներից մի քանիսը։

Յօդ. 1. Ընկերութեան ամէն մէկ նիստում ընտրւում է նոր նախագահ, որ իրաւունք ունի Ընկերութեանս կանոնադրութեան, որ յօդւածն էլ կուզէ լինի, փոխել ըստ իւր հայեցողութեան, կամ բացատրել իւր ուզած պէս։ Անդամներն այդ դէպքում իրաւունք չունեն առարկելու։

Յօդ. 2, Ընկերութեանս անդամ կարող են գրւել բոլոր 20 տարեկան հայերը. առանց սեռի, կրօնի և դասակարգի խտրութեան (կարողեն լինել և անսեռերը)։

Յօդ. 3. Սկզբունքով մերժւում է անդամավճար տւած անիծեալ սովորութիւնը։

Յօդ. 4. Ընկերութեան պատւաւոր անդամներ են համարւում բոլոր հայ գործիչները, հոգևորականներ, երեցփոխներ, հոգաբարձուներ, եղած թէ ներկայ խմբագիրներ, գրողներ, բանաստեղծներ, գրագէտ և անգրագէտ ուսուցիչներ, ազգային փաստաբաններ, ազգային բժիշկներ, ազգային գիւղատնտեսներ և ուրիշ ընկերութիւնների անդամներ։

Յօդ. 5. Ընկերութիւնս բաժանւում է մի քանի սեկցիաների. ամէն սեկցիա կունենայ իր գործնէութեան որոշ շրջանը, անկախ կենտրոնից։

Յօդ. 6. Ընկերութեան բիւրօն ամէն ամսի 15-ին պարտաւորւում է կատարել մի կամ մի քանի թռիչքներ։ Թռիչքները տեղի կունենան Թիֆլիզում, Պօլսում և հայաբնակ գաւառներում։

Յօդ. 7. Թռիչքներին մասնակցել ցանկացողները, 8 օր առաջ պիտի գրաւոր յայտնեն իրենց ցանկութեան մասին կենտրոնին, կամ սեկցիաների նախագահներին։

Յօդ. 8. Թռիչքներին մասնակցելու առաւելութիւն տրւում է, կուսակրօնութիւնից հրաժարւելու մտադրութիւն ունեցող վարդապետներին, անգրագէտ ուսուցիչներին, զրպարտւած երեցփոխներին, դերասաններին և անհաւատարիմ ամուսիններին։ *)

(Կը շարունակւի)

*) Նկատողութիւն. Թռիչքները կատարւում են պայմանաւոր.—կամ բարձրացած վայրում ներքից իջնել, կամ հազարաւոր վերստեր հեռու տեղ։

## ՊՕՍՏ-ԱՐԿՂ

*Բագու. Բուդաղեանցին.*—Ճիշտ էք ասում. Աստւած հոգի է տւել պօստատան ծառայողներին ու չի կարողանում առնել. մենք ինչ անենք. Բաթումից սեպտեմբերի 22-ին նամակ են գցել պօստ՝ մենք ստանում ենք հոկտ. 4-ին։ Սրան դուք ինչ կասէք։

*Քերչի. Կոստանդեանցին.*—Ձեր նամակներից ոչինչ չհասկացանք. հիմայ ինչ անենք։

*Ձրի թերթ խնդրողներին.*—Եթէ հայ թերթեր ձրի ուզողները (չեմ ասում կարդացողները) միմիայն բաժանորդ գրւէին, Աստւած վկայ, թերթերը ապահովւած կը լինէին, հօնորար էլ կը տային, մեռելներ էլ կը թաղէին—մի բան էլ սև օրւայ համար յետ կը գցէին։


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիզի ՊՕՍՏ-ՀԵՌԱԳՐԱՏԱՆ խնայողական կասսայի բաժանմունքում, բացւած է ընդունելութիւն

**ԸՊԸՀՕՎԸԳՐԵԼՈՒ ԵԿԸՄՈՒՏՆԵՐՆ ՈՒ ԳՐԸՄԸԳԼՈՒԽՆԵՐԸ**

Պայմանների մասին դիմել Պօստ-հեռագրատան գործավարութեան գրասենեակը։



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենալաւը Աշխարհում

ԱՆՊԱՅՄԱՆ
ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ
ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕ-
ՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ

Ամենառաջին և ամենաբարձր ամրու-
թեան, լաւ յարկութեան, չքեղ ֆա
սօնների և ամենալաւ գործածուող
նիւթերից։





ԱՐՏՕՆԻԱԾ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ
ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

ՊՐՕՎՕԴՆԻԿ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ




ՄԻՒՆԽ
ԵՒ
ՎԷՅՍ

1888

ԹԻՖԼԻԶՈՒՄ
ԵՒ
ԲԱԳՈՒՈՒՄ







Լոյս տեսաւ
Ռ. Խան-Ազատ և Գ. Վարդանեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

27 նկարներով և մի մեծ գունաւոր քար-
տէզով։

Դասընթացք ծխ. դպրոցների IV բա-
ժանմունքի և ժողովրդական ընթերցանու-
թեան համար։

ԳԻՆՆ Է 75 ԿՈՊ.

Գլխաւոր պահեստը «Գուտտենբերգ» գրա-
վաճառանոցում. կարելի է դիմել և հեղի-
նակներին՝—Тифлисъ. Сурпъ-Нишанское
училище.






ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Գրական, քաղաքական, հասարակա-
կան եւ առեւտրա-արդիւնաբերական ան
կուսակցական օրաթերթի
Առայժմ լոյս է տեսնում երկուշաբթի
օրերը։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՄԻՈՒՆ ՑՈՒՆ. 1 Ր.։

Հասցէն՝ Тифлисъ Редакція
газеты «Сурандакъ»

ՕՊԵՐԱՅԻՆ ԵՐԳԻՉ Մ. ՎԱՐԴԻԿԵԱՆԸ

Պարապում է երկու սեռի անձանց հետ երաժշտական առարկաներից (սոլֆեջիօ, տեօրիա) այլև սօլօ երգիչների հետ։ Անցնում է ձայնի մշակումը պրօֆեսօր Բոնկոնի մեթոդով։ Խմբական երգեցողութեան համար էլ ընդունում է ցանկացողներին։ Մանրամասնութիւնները իրան հետ անձամբ։

Հասցէն՝ Վանքի մեծ փողոց, տուն Ցարութիւնեանի № 28 (Առաջնորդարանի դիմաց) երեկոյեան ժամը 4—7։

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՅԱՆ ՊԱՐՏԷԶ
ՎԱՌՎ. ՍՄԲԱՏԵԱՆՑԻ

Պատրաստւում են երկսեռ աշակերտներ բոլոր միջնակարգ (և Ներսիսեան, Ցոճեանեան, Գայիանեան) դպրոցներ ընդունելու։ Աւանդւում են նաև ֆրանսերէն, գերմաներէն. ձեռագործ (կերտուածք, դաղում և կոզմագործութիւն) և մարմնարզութիւն։ Ընտանիքիս մէջ միայն ապրելու կայ 2 աշակերտի տեղ։ Ընդունելութիւնը սկսած է։ Սօլօլակ, փող. Պասկևիչի, № 13.

Առաջնակարգ համարներ

## „ՎԻԿՏՕՐԻԱ"

Գտնւում է Թիֆլիզի կենդրոնում, Դւորցովայա փողոցի վրայ, փոխարքայի պալատի այգուն կից։

Համարները գեղեցիկ կերպով կահաւորւած, նորերս հիմնովին վերանորոգւած և ամեն յարմարութիւններով։ Առաջից անցնում է էլեկտրաքարշը։

Օրական վարձը 60 կ. մինչև 4 ր.

Ամսով վարձողներին զիջումն։ Ընտանիքներին առանձնապէս տրւում են ամեն տեսակ յարմարութիւններ։

Ծառայողները վստահելի և քաղաքավարի են։ Սենեակներին կից կան տաք և սառը վաննաներ։ Էլեկտրական լուսաւորութիւն։

Հեռախօս № 1033

---

Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի ու Լ. Շանթի

ԿԱԶՄԱԾ

## ԼՈՒՍԱԲԵՐ

Հայերէնի դասագիրք

Լոյս տեսան

Ա. տարի, երրորդ տիպ. 30 կ.

Բ. տարի, երկրորդ տիպ, բարեփոխ. 45 կ.

Երկուսն էլ ընդունւած կովկասեան շրջանի ուսումնարանական հոգաբարձուի կողմից, իբրև դասագիրք պետական դպրոցների համար։

Տպագրւում են.

Գ. տարի . . . . . 60 կոպ.

Դ. տարի . . . . . 75 կոպ.

Գլխաւոր պահեստներն են հետևեալ գրախանութները. Թիֆլիսում «ԳՈՒՏՏԵՄԲԵՐԳ» և Կենտրոնական, Բագւում Сотрудникъ, Երևանում Յովհաննիսեանի և Շուշում Բ. Տէր-Սահակեանի։

---

МАГАЗИНЪ

## Композиція

Тифлисъ Пушкинскій пассажъ № 8.



Громадная экономія шведскаго композиціон. бѣлья.

→Носится не менѣе двухъ лѣтъ←

Постоянный большой выборъ свѣжаго товара

Воротниковъ, манишекъ и манжетъ.

Единственный представитель для Тифлиса и ихъ окрестностей

по фабричнымъ цѣнамъ

передѣлка въ любой фасонъ безплатно

М. А. КАЛТАГЯНЦА

---

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՒՈՂ

## Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ

### ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միքայէլեան պր. №24,4.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն,

Դասընթացքն աւարտողներին տրւում են ատեստատներ։

ԳՈՐԾՆԱԿԱՆ գրագրութիւնները կատարւում են կուրսերում Լօնդօնի Pifman. և Փարիզի Berlitz դպրոցների ձևով կազմակերպւած Muster. Comptoir-ում։ Նիւթերն աւանդւում են ռէալ կեանքից. Առարկաններն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ. գերմ. ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական. 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրայ, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենաժամ ձեռքի ուղղումը), բ) ոչ պարտադիր. 1) օտար լեզուներ, 2) ոճագրութիւն, 3) դակտիլօգրաֆիա (ռեմինգտոն և այլ.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարւում են և զատ զատ։ Խնդիրների ընդունելութիւնը 10—12 և 4—5 և կէս. ժ.։ Ծրագիրը և կանոններն ուղարկւում և տրւում են ձրիաբար կուրսերի շէնքում։

Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից. սեպտեմբերի 15-ից պարապմունքները։

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝

Տ. ՓԻԼՈՅԵԱՆ

---

Ս. և Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ



## ՁԿՆԱՎԱՃԱՌԻ ՄԱԳԱԶԻՆԸ

(Պուշկինեան փող. տուն Սունդուկեանի, վրաց սեմինարիայի դիմաց)

Ամէն օր ստացւում է սեփական ձկնարդիւնաբերանից թարմ ձուկ

ՍԵՒՐՈՒԳԱ, ՕՍԷՏՐԻՆ, ԹԱՌԻ

Ունենք մեծ քանակութեամբ թարթի դօշ, Դոնի և տեղական բալիկ, ճիպա, ցալձվալա, եանի և այլ

ԸՆՏԻՐ ՏԵՍԱԿԻ ՁԿՆԿԻԹ (жидка) ԵՒ ԽԱՒԱՐ

Կովկասեան և արտասահմանեան ձկնային կանսերւներ

Գները ամենաչափաւոր

---

ԾԽԱԽՈՏԻ ԲՈԼՈՐ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ

## 50% ԵՒ ԱՒԵԼԻ 50%

ԸՆԿՑԻՋԻ ԸԻԲԵԼԸՆԸԼՈՒ

և ծխախոտի թանգանալու պատճառով

**Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ** և Որդ. գործ.

Իրեն նպատակն է դրել՝ պահել պահպանել առաջւայ պէս արտադրւող պապիրօսների բարձր յատկութիւնը և առանձին ուշադրութիւն դարձնել

Симпатія № 8 10 հ. 6 կ. Народныя Экономія 10 հ. 4 կ.

Գների այսպիսի աննշան բարձրացումով գործարանը հնարաւորութիւն ունի մշտապէս պահպանել արտադրւող պապիրօսների բարձր յատկութիւնն ու արժանաւորութիւնը, միենոյն ժամանակ աշխատելով ապագայում լաւացնել նրանց, որպէսզի արդարացնի և ամրացնի այն «ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆԸ», որով մեր ֆիրմայի պապիրօսները վայելում էին 50 տարւայ ընթացքում պ. պ. սպառողների կողմից։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Ներկայ յայտարարութիւնով (ոչ թէ ռեկլամ)

**Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴ.** գործարանը

ցանկանում է յարգելի հասարակութեան իրազեկ պահել գործերի ներկայ դրութեան վերաբերմամբ։ Ակցիզ. սրօր. մասին կանոնադրքի 940 յօդւածի հիման վրայ վերոյիշեալ պապիրօսները արգելւում են ծախել էտիկէտների վրայ նշանակած գներից թանգ։

Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Электропечатная С. М. Лосаберидзе Московская ул. № 5.

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ



Հայը, Վրացին եւ Թուրքը

—Ավ չուստ, նա կուշտ.

(Իսկական երեւոյթ է ոչ պատահական մենամարտութիւն)

## ԿԱՆԱՆՑ ԻՐԱՒԱՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ



կինը քաղաքում, մարդու տունն է քանդում.
կինը գիւղում-մարդու ընկեր է վաղուց։

## ՀԱՅԸ ՀԱՅԻ ՀԵՏ



—Միմեանց ուզում են ուտել։

## ՀԱՅԸ ՕՏԱՐԻ ՄՕՏ



Հայը կատու է դառնում, մինչ այն աստիճան քծնում է, որ օտարի նողկանքին էլ է արժանանում։